ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 75 – Ա 17 փետրվարի 2020 թ.

ԱՄԱԼՅԱ ՀՐԱՆՏԻ ՊԱՏՎԱԿԱՆՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԱՏՋՐԵՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի 1-ին մասի, 95-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման N 3 հավելվածի 69-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներն ու Ամալյա Հրանտի Պատվականյանի դիմումը

որոշում եմ՝

1. 2020 թվականի փետրվարի 17-ից, մինչև սահմանված կարգով դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի անցկացումը և տնօրենի ընտրվելը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շատջրեք գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Ամալյա Հրանտի Պատվականյանին՝ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր:

17.02.2020

X

ԳՆԵԼՈՒ ԱՍԼԱՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ